պիր. և Շահամիրն և երկան Տէր Յովանէսն քէֆիլ ե-
ղեալ հազիւ պրծուցին ի ձեռաց եւ տարան զձեռա-
պիրն առին:

Եւ ես անտի եղեալ գնացի ի խանուէթ և երեկոյին
գնացի ի ժամ Սուրբ Նիկողոս և զհացն հետ միաբա-
նիցն կերայ, և եղեալ գնացի ի տուն: Երեկոյս ի Քօչէ
հալաճին Վլանկոյ զմի հայ սօյմիչ արարին գինովք:

Դշի (23 Ապրէլ) առաւօտուս ի մեր ժամն գնացի,
եւ յետոյ կանչեց զիս Գրիգորն մեր Շէրպէթճի և պահ
մի նստեալ անդ, յետոյ կանչեց զՏէրտէրն իմ և զվար-
պետն իմ Տէր Յովանէսն և զՏէր Մարկոսն և աւրհ-
նեցին զտունն, և նստեալ անդ ոչ սակաւ. և յետոյ ե-
լեալ գնացի ի տուն, պահ մի ննջեցի և եղեալ գնացի
ի խանուէթ: Եւ տեսի զի Յօճա Դանիէլն և Յօճա Դա-
վիթն և այլ մեծամեծք զորս յայտնի է ի գիրս, գային
ի Թահտախանէն, և իմ տեղեկացեալ վասն իրին, և
ասացին թէ Զաճիկն զայն յորմէ հուճէթի սուրթն
ի քովն էր՝ բերաք ի Յօճա Ատամի քովն վանցոյ, որ
էր այր իմաստուն և խորհրդական, ևս ծանօթութիւն
ունի եղեալ ընդ տաճկին. և յառաւօտէն նստին անդ
մինչև կէս օրս, հազիւ թէ գհուճէթն և զֆէթվան ա-
ռեալ են ի ձեռաց նորա այսքան ընծայիւ և այսքան
աղաչանօք և պաղատանօք: Եւ նա ասացեալ թէ Ահա՛
զայս իմ ձեռացս առիք, ապա բայց այն Յովանէս
սևագլխին հետն է այս հիւճէթիցս մայրն, որտեղ որ
երթայ՝ նա՛ որչափ ուզէ կու հանէ և յականջէ յա-
կանջ կու ձգէ Տաճկաց. թէ մի ձար ունէք եւ հնար՝
տեսէք յառաջմանէ, քանի որ չէ չատացեր բանն: Եւ
դարձեալ տեսի թուղթ մի ի ձեռս Յօճա Դանիէլին և
խնդրուածով առի ի ձեռաց նորա և կարդացի, եւ էր
գլուխ գրին այս. Արդար Ոհան վարդապետ քաշեց
զիս ի թենհան Յովանէս վարդապետին առջեւ եւ լինճ
ասին թէ Մէկ խօսք մի ունիմք քեզ ասելու, և եր-